ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<04>> սեպտեմբերի 2015թ. N: 191-Ա **ք.Գյումրի**

ՎԱԼԻԿՈ ԳԻՎԻԵՎԻ ՆԵՐԳԱՃԵԻՆ <<ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 3-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» N 3 որոշումը, եզրակացությունը և Վալիկո Ներգաճեի 2015 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Վալիկո Գիվիևի Ներգաճեին 2015 թվականի սեպտեմբերի 4-ից նշանակել «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում և նրա հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր՝ 4 (չորս) տարի ժամկետով:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկությանի հետ՝ ճիշտ է՝